

## Վերջին հավածի միատեսությունը

Գլուխ 17. Խորհուրդ Բաբելոն

Գլուխ 18. Խորհուրդ Բաբելոն

## Գլուխ 19. Թագավորի վերադարձը

Գլուխ 20. Հազարամյան

Գլուխ 21. Հավիտենություն

Գլուխ 22. Ամփոփում

«Ահա կհղիանաս և որդի կծնես ու Նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի, և Տեր Աստված Նրան կտա Իր Հոր՝ Դավթի աթոռը. և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և Նրա թագավորությանը վերջ չի լինի» (Ղուկաս 1:31-33):

Մենք լուրջ ենք ընդունել այս խոստումը: Դավթի աթոռն այդ ժամանակ չկար: Եվ այն չկա մինչև հիմա: Նրա խոստումն արդեն կատարվել է: Այն ապագայում է կատարվելու: Ի՞նչ է դա իրականում նշանակում:

## Աստծո խոստումը

- Դավթի հետ կապած Ուխտը ( Բ Թագ. 7:11-16)
- Աստված Դավթին թագավորական սերունդ խոստացավ (Ես. 7:13)
- Հավերժական գահ (Բ Թագ. 7:13,16,19, Ա Մն. 17:12, 22:10, Ես. 55:3, Եզեկ. 37:25)
- Քաղաքական թագավորություն (Ծննդ. 17:2-8)
- Այն նույնիսկ հաստատվեց երդումով (Սաղմ. 132:11, 89:3,4,34)
- Սա չէր կարող վերաբերել Եկեղեցուն (Եզեկ. 37:21-28)

«Սրանց մասին էր, որ մագարեացավ Ենովքը, որ Ադամից հետո յոթերորորդն էր, և ասաց.

«Ահա Տերը գալիս է Իր բյուրավոր սրբերի հետ՝ բոլորի դատաստանը տեսնելու և հանդիմանելու նրանց մեջ եղող բոլոր ամբարիշտներին իրենց կատարած ամբարիշտ գործերի համար և այն բոլոր խիստ խոսքերի համար, որ անաստված մեղավորները խոսեցին Իր դեմ» (Հուդա 1:14,15):

Ամենահին մարգարեությունը՝ տրված մարգարեի կողմից. նախքան Նոյի ջրհեղեղը:

1. Ադամ - Մարդը
2. Մեթը - նշանակված է
3. Ենովս - մահականացու
4. Կայան - (և) վշտի համար
5. Մադաղիել - (իսկ) Աստծո փառքը
6. Հարեղը - պետք է ցած իջնի
7. Ենովք - հրահանգելու (որ)

8.Մաթուսաղա - Նրա մահը կբերի

9.Ղամեք - (նրանց որ) խորտակվում են հուսահատության մեջ

10.Նոյ - հանգիստ

1) Եւ սորանցից հետո լսեցի շատ բազմության մեծ ձայնի պէս մի ձայն երկնքում որ ասում էր. Ալէլուիա, փրկությունը եւ փառքը եւ պատիվը եւ զօրությունը մեր Տէր Աստուծուն:

Meta tauta (այս բաներից հետո). (4X) 4:1, 7:1, 18:1, 19:1: «Եկեղեցու բաներից հետո...»: Alleluia-ն հունարեն ձևն է եբրայերեն Hallelu-jah բառի. (4 անգամ) = «Փառաբանեք Յահվեին»: Այն 24 անգամ հայնտվում է սաղմոսներում (Սաղմոսներ 146-150): Առաջին կիրառումը. Ա Մն. 16:4 (եբրայերեն) տոնելու տապանակի մուտքը Սիոն:

**Երգել են երեք պատճառներով.**

1. Աստված դատել է Իր թշնամիներին (19:1-4),
2. Աստված թագավորում է (19:5-6),
3. Հարսը պատրաստ է (19:7-10): Հռոմ. 8:18-23:

2) Որովհետեւ ճշմարիտ եւ արդար են նորա դատաստանները. Որովհետեւ նա այն մեծ պտոնիկին դատեց նորա պտոնկութեան մեջ, եւ իր ծառաների արեան վրէժը առավ նորա ձեռքից:

Վիշապի մասին գրված է իգական սեռով. «Ուրախացեք նրա վրա», պատվերը լինում է նրա ընկնելու ժամանակ (18:20): Այս հատվածը պատասխան է այդ պատվերին: (Հավատացյալներին արգելված է իրենց համար վրեժ լուծել. Հռոմ. 12:19):

3) Եւ երկրորդ անգամ ասեցին, Ալէլուիա. Եւ նորա ծուխը բարձրանում էր հավիտեանս հավիտենից:

«...հավիտյանս հավիտենից». սա շատ երկար ժամանակ է: Աստծո գահն ու զոհասեղանը վերաբերվում են Նրա դատաստանին. հմմտ. հ.3-ը Հայտ. 14:10-11, իսկ հ. 4-ը Հայտ. 5:6-10-ի հետ:

4) Եւ քսան եւ չորս երեցները եւ չորս կենդանիները վայր ընկան եւ երկրպագեցին Աստուծուն որ աթոռի վրա նստած էր եւ ասեցին. Ամէն, Ալէլուիա: 5) Եւ աթոռից մի ձայն դուրս եկավ ասելով. Օրհնեցեք մեր Աստուծուն, ով նորա բոլոր ծառաները, եւ նորանից վախեցողները, փոքրերը եւ մեծերը:

Հայտնությունը, իրոք, գահի գիրք է (Սաղմ. 110:1):

Տէրն ասեց իմ Տիրոջը, իմ աջ կողմը նստիր մինչև քո թշնամիները քո ոտների կոխելիք դնեմ:

6) Եւ ես լսեցի իբր փի մեծ բազմության ձայն եւ իբր շատ ջրերի ձայն, սաստիկ որոտմունքի ձայնի նման. Որ ասում էր. Ալէլուիա, որովհետեւ Ամենակալ Տէր Աստուածը թագավորեց:  
 7) **Խնդանք եւ ուրախ լինենք**, եւ փառքը տանք նորան որ եկավ Գառի հարսանիքը, եւ նորա կինը պատրաստեց իրան: 8) Եւ տրուեցավ նորան որ սպիտակ սուրբ եւ լուսափայլ բեռեզ հագնի. (որովհետեւ բեռեզը սուրբերի արդարությունն է:) 9) Եւ ասեց ինձ. Գրիբ, **Երանելի են** Գառի հարսանիքի ընթրիքին կանչուածները. Եւ ասեց ինձ. Սորանք Աստուծո ճշմարիտ խօսքերն են:

### **Յոթ «երանություններից» չորրորդը:**

- Երանի նրան, ով կարդում է, ու նրանց, ովքեր լսում են այս մարգարեության խոսքերը և պահում են այն բաները... (Հայտ. 1:3)
- Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում (Հայտ. 14:13)
- Երանի նրան, ով արթուն կեփսա ու կպահի իր հանդերձները (Հայտ. 16:15)
- **Երանելի են նրանք, որ կանչված են Գառնուկի հարսանիքի ընթրիքին (Յայտ. 19:9)**
- Երանելի և սուրբ է նա, ով առաջին հարության մեջ բաժին ունի (Հայտ. 20:6)
- Երանի նրան, ով կպահի այս գրքի մարգարեության խոսքերը (Հայտ. 22:7)
- Երանելի են նրանք, որ կատարում են Նրա պատվիրանները (Հայտ. 22:14)

### **Չարսնացու՞ն**

Սա Իսրայել լին է: Իսրայելը որպէս YHWH-ի կին (Ես. 54:1,4), պոռնիկ (Եզեկ. 16:35)

### **Իսրայել. Կռապաշտ կին**

Ովսէի երեք երեխաները: **Յեզրեել** (հեռու գցված, ցանված վերջին հունձքի համար), **Լո-րուհամմա** (չողորմյալ, առանց ողորմության, հմմտ. Ովս. 1:6) և **Լո-ամմի** (ոչ իմ ժողովուրդ հմմտ. Հռոմ. 11:1): Բայց ոչ մշտապէս հեռու գցված. Ովս. 1:11, 2:23, Հռոմ. 9,10,11, Չաք. 12:10, Ես. 62:5:

Սակայն երեխաների անունները փոխվեցին (Ովս. 2:1,14,15 Ձեր եղբայրներին ասեցէք՝ **ամմի** «ազգակից» եւ ձեր քոյրերին՝ **Րուհամա** «խորապէս սիրելի».): Իսրայելը հավիտյան հեռուգցված չի լինելու (Հռոմ. 11:1): Պողոսը, Հռոմեացիների Թղթում երեք գլուխ է հատկացնում այս վարդապետական թեմային, որ Իսրայելը հավիտյան փի կողմ գցված չի լինելու, այլ պիտի լինի օրհնության ուղի (Հռոմ. 11:11,12,15): Իսրայելը Նոր Կտակարանում հայտնվում է 73 անգամ. ամեն անգամ վերաբերելով Իսրայել ազգին:

### **Տարօրինակ կոնտրաստ**

Խորհուրդ Բաբելոն. «Ես թագուհի եմ նստած, ես որբնայրի չեմ ու սուգ պիտի չտեսնեմ» (Հայտ. 18:7):

**Իսրայել.** «Ամուսնալուծված» (Ես. 54:4-9, Եր. 3:8,14, Ովս. 2:14-19) և «որբևայրի» (Ողբ. 1:1, Ես. 54:4): Քահանայապետին արգելված էր ամուսնանալ բաժանված կամ որբևայրի կնոջ հետ: (Ղևտ. 21:10,13,14):

## Չարսը

Եկեղեցին. Բ Կորն. 11:2

-Մաքուր կույս. Եփ. 5:22-23

Հիսուսը Փեսան է. Հովհ. 3:22

-Եկեղեցին նկարագրված է որպես մի կույս, որ սպասում է իր փեսայի գալուն (Բ Կորն. 11:2, նաև Եփ. 5:22-23):

-Եկեղեցին «նշանված» է Նրա հետ, թեև չի տեսել Նրան (Ա Պետ. 1:8):

-Մի օր Նա կվերադառնա՝ Իր հարսնացուին երկինք տանելու (Հովհ. 14:1-6, Ա Թեսաղ. 4:13-18):

## Չրեական հարսանիք

**1. Ketubah, նշանդրեք (shiddukhin).** ապագա փեսացուի

ճանապարհորդությունը հոր տնից մինչև ապագա հարսնացուի տուն, գինը վճարելը և, դրանով իսկ, հաստատելով ամուսնական ուխտը (**ketubah-ը**): Սովորաբար կազմակերպվում էր ծնողների կողմից: Այդ կապը կարող էր քանդվել միայն ամուսնալուծության հատուկ ձևով: Նշանդրեքի ընթացքում որևէ անհավատարմություն համարվում էր շնություն:

**2. Փեսացուն հեռանում է Չոր Տուն.** փեսացուն վերադառնում է իր հոր տուն և հարսնացուից առանձին էր ժամում, որի ընթացքում նա ժամալու տեղ էր պատրաստում իր հարսնացուի համար իր հոր տանը. փեսացուն հարսի հետևից գալիս էր մի ժամանակ, որի մասին հարսնացուն չգրիտ չգիտեր. հարսնացուն ակնկալիքով սպասում էր, մինչև փեսացուն կգար ու անակնկալի կբերեր իրեն:

**3. Անակնկալ հավաքը.** փեսացուի վերադարձն իր հոր տուն իր հարսնացուի հետ huppah-ի (հարսանեկան խնջույք) համար՝ հաստատելու ամուսնությունը և տոնելով հարսանեկան խնջույքը հետագա յոթ օրերը (որի ընթացքում հարսնացուն ժամում էր իր հարսնացուի սենյակում փակված):

## Ամուսնությունն իրականացած

-Ուխտը հաստատված. Ա Կորն. 11:25

-Առնելու գինը. Ա Կորն. 6:19-20

-Հարսնացուն առանձնացած. Եփ. 5:25-27, Ա կորն. 1:2, 6:11, Եբր. 10:10, 13:12

-Ուխտի հիշեցում. Ա Կորն. 11:25-26

-Փեսացուն հեռանում է Հոր տուն...

-Նրան ուղեկցողները, երբ Նա վերադառնա՝ հավաքելու Իր Հարսին. Ա Թեսաղ. 4:16-17

«Եվ նրանց ասաց. «Ցանկանալով ցանկացա այս զատիկը ձեզ հետ ուտել Իմ չարչարվելուց առաջ: Բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ դա կատարվի Աստծո թագավորության մեջ, որովհետև ասում եմ ձեզ, թե որթի բերքից էլ չեմ խմի, մինչ Աստծո թագավորությունը գա» (Ղուկ. 22:15-18, հմմտ. Մարկ. 14:25, Մաթ. 26:29)

-Փեսացուն. Մաթ. 9:15, 22:1-13, Բ Կորն. 11:2, Եփ. 5:23-32

-Հովհաննես Մկրտիչը. (Փեսացուի բարեկամը, ոչ թե հարսնացուն). Հովհ. 3:29, Ղուկ. 16:16, Մաթ. 11:11-13

-Խնջույքը. Ես. 25:6-10, 26:1-4,19, հմմտ. Ղուկ. 22:15,16

-Հարսնացուն հատուկ փոխհարաբերություն է վայելում. հմմտ. Հովհ. 17:23-26

(Մաթ. 25-ի կույսերը հարսը չեն): Շատ գիտակներ ասում են, որ, ակնհայտորեն, Հին Կտակարանի սրբերը տեսադաշտում չեն երևում: (Որոշներն այլ կերպ են նայում սրան. նրանք Իսրայելն ու Եկեղեցին այստեղ միավորված են տեսնում: Իսրայելը նաև երևում է Ովս.2:14-23-ում և Ես. 62:5: Կան ականավոր գիտակներ (Barnhouse, և այլն), ովքեր ասում են, որ երկուսն էլ տեսադաշտում են: Նրանք հստակորեն երևում են վերջնական արդյունքում միավորված Նոր Երուսաղեմում 21 և 22 գլուխներում):

10) Եւ ես ընկա նորա ոտների առաջին որ երկրպագեմ նորան, եւ ասեց ինձ. Ջգոյշ կաց, մի անիր. Ես ծառայակից եմ քեզ եւ քո եղբայրներին, որ Հիսուս Քրիստոսի վկայությունն ունեմ. Տէր Աստուծուն երկրպագիր. Որովհետեւ Հիսուսի վկայությունը մարգարէության հոգին է:

«Hora me». երկու հունարեն բառեր. այս հրեշտակը մոտ չէր թակարդն ընկնելու, ինչպես Արուսյակը Եսայի 14-ում: Հրեշտակներին երկրպագելը սխալ էր (Կող. 2:18) և Հովհաննեսը գիտեր դա: Հրեշտակն ընդամենն Աստծո ծառա էր (Եբր. 1:14), և մենք չպետք է երկրպագենք ծառաներին (Գործք. 10:25-26): Հովհաննեսը չափազանց տպավորված էր. և նա, ավելի ուշ, նունիսկ կրկնում է սա (22:8-9):

Հիսուսն է արժանի երկրպագության. Միմոն Պետրոսը (Ղուկ. 5:8), Թովմասը (Հովհ. 20:28) և Հեսուն (Հեսու 5:13-15) և այլն: «Գրքի հատորում գրված է իմ մասին» (Մաղմ. 40:7):

**Մեծ Պողոսիկը արդեն դատապարտված է : Մնում է ծովի գազանը (նեռը), երկիրի գազանը (սուտ մարգարեն) և Սատանան:**

11) Եւ տեսա երկինքը բացուած, եւ ահա մի սպիտակ ձի, եւ նա որ նորա վրա նստած էր, կոչվում էր **Ռաստարիմ եւ Ճշմարիտ**, եւ արդարությունով է դատաստան անում եւ պատերազմում:

Երկինքը բացված (ինչպես Նրա մկրտության ժամանակ): Նրա թշնամիները գիտեն՝ Նա գալիս է. Հայտ. 12:12, Մաթ. 24:29-30, 26:64, երդման ներքո. Գործք. 1:11, Բ Թեսաղ. 1:7-10: Տարբերվում է Հայտ. 6-ի առաջին ձիավորից: Այստեղ Նա չի գալիս օդերի մեջ՝ տանելու Իր ժողովրդին տուն (Ա Թեսաղ. 4:13-18), այլ երկրի վրա Իր ժողովրդի հետ՝ հաղթելու Իր թշնամիներին և հաստատելու Իր թագավորությունը: «Հավատարիմ և Ճշմարիտ». (1:5, 3:7 և մինչև յոթ եկեղեցիների վերջը, Ես. 3:14):

«Տեր Աստծո Հոգին ինձ վրա է, որովհետև Տերն օժել է ինձ հեզերին ավետարանը քարոզելու. Նա ինձ ուղարկեց կոտրված սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն ու կապյալներին բանտի բացվելը հայտարարելու. Հռչակելու Տիրոջ ընդունելի տարին, **և մեր Աստծո վրեժխնդրության օրը**՝ մխիթարելու բոլոր նրանց, որ սգում են» (Ես. 61:1-2):

Հիսուսը, Նազարեթի սինագոգում կարդալիս (Ղուկ. 4:10-21), կանգ առավ այս կետում և հայտարարեց. «Այսօր այս գրվածքը կատարվեց ու ձեր ականջներով լսեցիք»: Հիմա Նա իրականացնում է այս առաքելությունը:

12) Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս, եւ նորա **գլխի վրա շատ պսակներ (diadema)**. Եւ **անուն** ունէր գրած, որ ոչ ով չ'գիտէր բայց միայն ինքն: 13) Եւ իր վրա հանդերձ էր հազած արյունով ներկուած, եւ նորա անունն կոչվում է Աստուծոյ Բան:

Թագեր, ոչ թե ստեփանոսյան (stephanos) պսակներ: Նա շատ իշխանություններ ունի (հմմտ. Մաթ. 28:18, Ղուկ. 19:12): Նկատեք Նրա անունների վրա դրված շեշտը (հհ. 11-13,16), «գաղտնի անուն» նու՞ յն է, ինչ «նոր անունը» 3:12-ում: Մատթեոս. Թագավորների Թագավոր, Մարկոս. Հավատարիմ և Ճշմարիտ, Հովհաննես. Աստծո Խոսքը, Ղուկաս. Մարդու Որդի:

Պատմուճանը ցողված (ոչ թե «թաթախված») արյան մեջ (Ա Թ. Ռոբերթսոնի ուղղումը). Ես. 63:1-4, Հայտ. 14:20:

Հայ. 14:20 - 20 Եւ հնձանը կոխուեցաւ քաղաքիցը դուրս, և դուրս եկաւ արիւնը հնձանիցը մինչև ձիերի սանձքը հազարևվեց հարիւր ասպարէզի չափ:

Ես. 63:1-6 - 1 Մ՛վ է սա, որ գալիս է Եդովմից, հանդերձները կարմրացած՝ Բօսրայից. սա՛ որ փառավորուած է իր հագուստով, և ծածանվում է իր շատ զօրութեան մէջ: Ես, որ խօսում եմ արդարությունով և կարող եմ փրկելու: 2 Ի՞նչու համար կարմիր է քո հագուստը, և քո հանդերձները՝ հնձան կոխողի հանդերձի պէս: 3 Հնձանը ես մենակ եմ կոխել, և ժողովուրդներից մէկը չկար ինձ հետ. և ես կոխեցի նորանց իմ բարկութիւնով, և ոտնահարեցի իմ սրտմտութիւնով, և որանց արյունը իմ հանդեձներով տուավ և իմ բոլոր զգեստները ներկեցի: 4 Որովհետև վրէժխնդրության օր կար իմ սրտում, և իմ փրկուածների տարին եկել էր: 5 Եւ ես նայեցի, բայց օգնող չկար, և ակնկառույց մտիկ տուի, բայց ձեռք բռնող չկար և ինձ օգնեց իմ բազուկը, և իմ բարկությունն էր ինձ ձեռք բռնողը: 6 Եւ ես ժողովուրդներ կոխ տուի իմ բարկությունով, և նորանց արբեցրի իմ սրտմտութիւնով, և նորանց արյունը իջեցրի գետինը:

**14) Եւ երկնքի զօրքերը նորա ետեւից գնում էին սպիտակ ձիերի վրա սպիտակ եւ մաքուր բեհեզ հագած:**

Նա թողնում է երկինքը, որպէսզի երկիր գա վերջին ճակատամարտի համար... Նա այս մասին զգուշացրել էր քահանայապետի ներկայությամբ, երդման ներքո (Մաթ. 26:64): Պենտեկոստեի օրը, Պետրոսը հղում արեց այս օրվան (Գործք. 2:19,20):

«**Բանակներ**». Հուդա 14, Ջաք. 14:5: Հրեշտակները Նրա հետ են (Մաթ. 13:41, 25:31, Բ Թեսաղ. 1:7), բայց նաև մենք ենք Նրա հետ (Ա Թեսաղ. 3:13, Բ Թեսաղ. 1:10, Եբր. 2:10, Կող. 3:4, Ջաք. 14:5):

**15) Եւ նորա բերանից դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. եւ ինքը հովուում է նորանց երկաթէ գավազանով. Եւ ինքը կոխում է Ամենակարող Աստուծո բարկության եւ սրտմտության գինու հնձանը:**

«**Սուր**». Խոսքը «կենդանի է և զորավոր» (Եբր. 4:12), իրականացնելու Նրա նպատակները երկրի վրա (Հայտ. 17:7, 6:11, 10:7, 15:1): Թշնամիները ոչնչանում են Նրա բերանի շնչից (Բ Թեսաղ. 2:8, Ես. 11:4):

«**Երկաթէ գավազան**». Սաղմ. 2:9, Հայտ. 2:27, 12:5 և այստեղ: «Պիտի սկսեմ ու վերջացնեմ» (Ա Թագ. 3:12):

- Ոչ թե Հափշտակություն, այլ Հայտնվելը
- Ոչ թե օղի մեջ, այլ երկրի վրա
- Ոչ թե սրբերի ՀԵՏԵՎԻՑ, այլ սրբերի ՀԵՏ
- Ոչ թե մխիթարելու, այլ հաղթելու
- Ոչ թե մեզ պահպանելու երկնքում, այլ իշխելու մեր հետ միասին երկրի վրա

16) Եւ իր հանդերձի վրա, եւ իր ազդրի վրա գրած էր անունը, ԹԱԳԱԻՈՐՆԵՐԻ ԹԱԳԱԻՈՐ ԵՒ ՏԷՐԵՐԻ ՏԷՐ: 17) Եւ տեսա մի ուրիշ հրեշտակ որ կանգնած էր արեգակի վրա, եւ մեծ ձայնով աղաղակեց ասելով ամեն թռչուններին որ երկնքի մէջ թռչում են. Եկէք հավաքուեցէք մեծ **Աստուծո ընթրիքին**. 18) Որ ուտէք թագավորների մարմինները, եւ հազարապետների մարմինները եւ հզօրների մարմինները. Եւ ձիերի եւ նորանց վրա նստողների մարմինները, եւ ամենի մարմինները՝ ազատների եւ ծառաների, մեծերի եւ փոքրերի:

(Կան երկու «ընթրիքներ». եկէք չշփոթենք դրանք): Ղուկ. 17:37, Մաթ. 24:28: «**Մարմին**» բառը 6 անգամ հայտնվում է այս պարբերությունում (հ.18-21), հմմտ. Հայտ. 14:14-20, 16:13-16, Եզեկ. 39:17-20:

### **Գազանին եւ սուտ մարգարէի պարտությունը:**

19) Եւ տեսա գազանը եւ երկրի թագավորները եւ նորանց զօրքերը մէկ տեղ ժողովուած որ պատերազմ անեն ձիին վրա նստողի հետ եւ նորա զօրքերի հետ:

**Ապշեցուցիչ է.** իմանալով հանդերձ, պատերազմել Աստծո դեմ (Մաղմ. 2:1-9): Այս

«ճակատամարտը» Աստծո խիխաղն է մարդկային ամբարտավանության դեմ:

Համաշխարհին գալիք առաջնորդը գալու է մեծ կատաղությամբ (Դան. 11:44, Հովել 2, Դան.

11, Ես. 24): Մեծ, ժամանակակից զինված մի բանակ (Նավում 3:2), կարմիր

հանդերձավորված (Նավում 2:3) սրնթած մտնելու այս տարածքը: Չկա ոչ մի նշում նույնիսկ նշույլ պայքարի մասին... Բ Թեսաղ. 2:8:

20) Եւ գազանը բռնուեցավ, եւ նորա հետ սուտ մարգարէն էլ որ նշաններ էր անում նորա առաջին, որոնցով մոլորեցրեց նորանց որ գազանի դրոշմն առան, եւ նորանց էլ որ երկրպագեցին նորա պատկերին. Եւ երկուսն էլ կենդանի կենդանի գցուեցան կրակի լիճի մէջը որ ծծմբով այրվում է:

1000 տարի անց, նրանք դեռ այնտեղ են (Հայտ. 20:10): Երկուսը կենդանի գցվել են Գեհենն

(իսկ (հմմտ.) երկուսը (Մովսեսն ու Եղիան) կենդանի վերցվել են երկինք (զլ. 11):

21) Եւ մսացեալները սպանուեցան ձիին վրա նստողի սրիցը, որ նորա բերանից դուրս էր գալիս. եւ բոլոր թռչունները կշտացան նորանց մարմիններից:

**Նշում.** այստեղ ոչ մի հարություն չկա: Հափշտակությունն արդեն տեղի է ունեցել: «Երկրորդ

հարությունը» տեղի է ունենում 1000 տարի անց: Անհավատները, մահանալով, գնում են

Հադես՝ անմաքուր մի վայր, մեռելների (ժամանակավոր) տեղը: Հավատացյալներն

անմիջապէս գնում են Տիրոջ ներկայության մէջ (Փիլիպ. 1:19-23, Բ Կորն. 5:6-8): Հադեսը իր

մեռելներին տալու է Հայտ. 20:13-ում:



Հիսուսը հիմա հաստատում է Իր գահը երկրի վրա՝ Դավթի գահը (Ես. 9:6,7, Ղուկ. 1:32,33):

«Քանի որ Ես բոլոր ազգերին Երուսաղեմի դեմ պատերազմելու պիտի հավաքեմ, և քաղաքը պիտի վերցվի, և տները պիտի կողոպտվեն ու կանայք՝ պղծվեն. և քաղաքի կեսը պիտի գերեվարվի, բայց ժողովրդի մնացորդը քաղաքից չպիտի կտրվի: Այնժամ Տերը դուրս պիտի գա ու պատերազմի այն ազգերի հետ, ինչպես պատերազմեց ճակատամարտի օրը: Եվ այն օրը Նրա ոտները պիտի կանգնեն Ձիթենյաց լեռան վրա՝ Երուսաղեմի դիմաց, արևելյան կողմում, և Ձիթենյաց լեռը կեսից բաժանվելու է դեպի արևելք ու արևմուտք. և մի շատ մեծ ձոր պիտի լինի, և լեռան կեսը դեպի հյուսիս պիտի սահի, իսկ մյուս կեսը՝ դեպի հարավ»  
Զաք. 14:2-4:

### **Չաջորդ դաս**

Կարդացեք 20-րդ գլուխը և Եսայի 65-ը: Մեծ Բաժանություն. Լինելու՞ է բառացի «Հազարամյա»